Ճանաչի՛ր ինքդ քեզ

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Շաբաթաթերթ «Krtutiun» (education) weekly «Кртутюн» (образование) еженедельник 21.02.2024թ. չորեքշաբթի թիվ 8 (1137)

Կարդա՛

«Օ՜, գրքերի աշխարհը տիեզերք է անեզր», - ասում է **Բանաստեղծը:** Իսկ նրանից շատ առաջ **Առաքյալն** է հաստատել. *«Յուրաքանչյուր գիրք սուրբ է»*:

5-րդ դարում մենք որոշեցինք մեր ազգային ինքնությունը եւ դեպի հավերժություն մեր ինքնատեսակ երթը ամրագրել **գրապաշտությամբ: Ոսկեդար** վերտառությամբ մեր պատմության մեջ ոսկե էջ դարձած ժամանակահատվածում վերականգնեցինք **Հայոց այբուբենը,** թարգմանեցինք **Աստվածաշունչը**, հիմնեցինք դպրոցներ... Հետագա 1600 - ամյա նորագույն դպրությամբ փրկեցինք մոռացումից մեր անցյալի փառքը, աշխարհաստեղծման օրից **Աստծուց** ժառանգած ողջ բանական սերուցքը, որ կազմավորվող մարդկության քաղաքակիրթ զարգացման ատաղձը եւ առանցքը դարձավ...

Ամեն հայ գիտե Մատենադարանի խորհուրդը, այստեղ պահպանվող հազարավոր ձեռագրերից յուրաքանչյուրի անգին արժեքը... **Մեղապարտ Հակոբի** շնորհիվ մեզանում **տպագրության** սկզբնավորումից ի վեր դրանցից հարյուրավորները եւ նոր ստեղծված գիտական ու գեղարվեստական բյուր գոհարներ գրքի տեսքով դրվեցին Ազգի սեղանին: **Գիրքը** մեզ համար, ինչպես մեր գոյության բոլոր ժամանակներում անընդմեջ, մնաց որպես սրբազան մասունք՝ անկախ իր պարունակած էությունից (հիշենք *«Մշո ճառընտիր»* մատյանի եւ գրային այլ հայտնի ճակատագրեր):

Արդ. մեր **պատմության** հանգրվաններով, ազգային ազատագրական պայքարի **հերոսական** կենսագրությամբ, ինքնատիպ **հզոր** մշակույթի արարման անվիճելի իրողությամբ ծանրաբեռ՝ այսօր կանգնած ենք նոր ժամանակների մարտահրավերների հանդիման: Եւ, ուզենք, թե չուզենք, դարձյալ պիտի ապավինենք Նորին մեծություն **Գրքին,** որովհետեւ նա՛ է մեր անպարտելի զենքը բոլոր ժամանակների համար, որովհետեւ մեր էական արժեքն ու բովանդակությունը, թե՛ իբրեւ անհատ մարդ, թե՛ իբրեւ հավաքական ժողովուրդ, **Աստծո** կամքով եղել ու մնում է **բանականությունը**՝ իր բոլոր ելեւէջներով. արհեստից մինչեւ կրթություն, արվեստից մինչեւ գիտություն, իբրեւ **աշխատանք**, **ստեղծագործելու շնորհքով օժտված բանական արարածի բնական գոյություն...** Ուրեմն, որպես 11-րդ **պատգամ** ենթարկվենք **«Կարդա՛»** հորդորին՝ աներեր հավատով ապավինելով **Գրքին**՝ որպես **լապտեր մեր բոլոր ճանապարհների համար:**

Գ. Մ.

* * *

*Հովհաննես Թումանյանի ծննդյան օրը՝ փետրվարի 19-ը, ՀՀ գրողների միության նախկին նախագահ, երջանկահիշատակ Լեւոն Անանյանի նախաձեռնությամբ, տարիներ առաջ մեզանում սկսվեց նշել՝ որպես **գիրք նվիրելու օր:***

Մայրենի

Առաջին բառը, որ արտաբերում ես
քո թոթով լեզվով,
Առաջին միտքը, որ հղանում ես
աշխարհճանաչման քո արշալույսին,
Առաջին դրվագը, որ ագուցում ես
հուշերիդ շղթային,
Առաջին տողը, որ գրում ես,
Առաջին գիրքը, որ կարդում ես,
Առաջին սերը, որ զգում ես,
Առաջին օրը, որ ապրում ես,
Աղոթքդ առաջին,
Զարմանքդ առաջին,
Կասկածդ առաջին,
Առաջին նկատումդ,
Առաջին ընկալումդ,
Հայտնագործումդ ու բացահայտումդ
առաջին...
Ու այս ամենը՝ անվերջ, անընդհատ,
նորից ու դարձյալ՝ մի ամբողջ կյանք՝
մինչեւ շունչդ վերջին...
Քո սկիզբը,
Քո ընթացքը,
Քո էությունը՝
Քո մայրենի լեզուն:

Գ.Մ.

տե՛ս՝ նաեւ էջ 8-9

Փետրվարի 21-ը նշվում է՝ որպես Մայրենիի միջազգային օր: Օրվա կապակցությամբ՝ պատշաճ միջոցառումների պակաս չեղավ մեր հայրենիքի բոլոր կրթօջախներում:

Երկիր

Հայ մարզիկների հաղթարշավը

Վերջին օրերին հայ մարզիկների հաղթարշավը եւրոպական մրցահարթակներում սկսվեց տասնիններորդ **Ալեքսանդրա Գրիգորյանի** փայլուն հաղթանակով: Հայաստանի ծանրամարտի կանանց հավաքականի անդամը ոսկե մեդալ է նվաճել Բուլղարիայի մայրաքաղաք Սոֆիայում ընթացող՝ Եվրոպայի մեծահասակների առաջնությունում: 55 կգ քաշային հայ մարզուհին երկամարտի 196 կգ արդյունքով կարիերայում առաջին անգամ նվաճել է Եվրոպայի չեմպիոնի տիտղոսը:

շարունակությունը՝ էջ 2

Աշխարհի հետ

Համաշխարհային համաժողովում

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարար **Ժաննա Անդրեասյանն** Աբու Դաբիում մասնակցել է ՅՈՒՆԵՍԿՕ-ի՝ մշակույթի եւ արվեստի կրթության համաշխարհային համաժողովին, որի շրջանակում զեկույցով հանդես է եկել «Quality and relevant lifelong and life-wide learning in and through cultural diversity» խորագրով պանելային նիստում:

Զեկույցի ընթացքում նախարարը ներկայացրել է մշակութային բազմազանության համատեքստում շարունակական կրթության ապահովման անհրաժեշտությունը եւ անդրադարձել Հայաստանի փորձին:

շարունակությունը՝ էջ 2

«Էրազմուս+»

Մանկավարժական կրթության բարեփոխումն առանցքային խնդիր է

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարար **Ժաննա Անդրեասյանը** մասնակցել է *«Էրազմուս+»* բարձրագույն կրթության ոլորտում կարողությունների զարգացման *«Մանկավարժական կրթության փոխակերպումը հանուն կանաչ եւ թվային անցման Հայաստանում եւ Մոլդովայում»* ծրագրի մեկնարկին:

Միջոցառմանը ներկա են եղել նաեւ ԿԳՄՍ նախարարի տեղակալ **Արաքսիա Սվաջյանը,** Հայաստանում ԵՄ պատվիրակության համագործակցության բաժնի ղեկավար **Ֆրանկ Հեսսը,** Հայաստանում *«Էրազմուս+»* ծրագրի ազգային գրասենյակի համակարգող **Լանա Կառլովան,** բուհերի ներկայացուցիչներ, դասախոսներ, ուսանողներ:

Ծրագրի նպատակն է՝ բարեփոխել մանկավարժական կրթությունը Հայաստանում՝ անցում կատարելով ավանդականից դեպի ապագային միտված ուսումնական ծրագրերի եւ ուսուցման մեթոդների, դեպի հանրակրթության ազգային նպատակների իրագործում՝ կանաչ եւ թվային ուսուցման միջոցով:

շարունակությունը՝ էջ 4

Հայ մարզիկների հաղթարշավը

սկիզբը՝ էջ 1

Հրում վարժությունում մեր մարզուհին նաեւ փոքր ոսկե մեդալ է նվաճել՝ գլխավերեւում պահելով 115 կգ կշռող ծանրածողը:

Պոկում վարժությունում Ալեքսանդրան բարձրացրել է 81 կգ կշռող ծանրածողը:

Այս քաշային կարգում Հայաստանի մյուս ներկայացուցիչ, Եվրոպայի բրոնզե մեդալակիր **Իզաբելա Յայլյանը** երկամարտում գրավել է 7-րդ տեղը՝ 180 կգ արդյունքով:

* * *

Հայաստանի ծանրամարտի տղամարդկանց հավաքականի անդամ, 67 կգ քաշային **Գոռ Սահակյանը** երկրորդ տարին անընդմեջ հռչակվել է Եվրոպայի չեմպիոն:



Բուլղարիայի մայրաքաղաք Սոֆիայում ընթացող Եվրոպայի առաջնությունում Սահակյանը ոսկե մեդալ է նվաճել՝ երկամարտի 311 կգ արդյունքով (140+171 կգ): Հրում վարժությունում Գոռը գլխավերեւում պահել է 171 կգ ծանրածողն ու արժանացել նաեւ փոքր ոսկե մեդալին, իսկ պոկում վարժությունում բավարարվել է փոքր բրոնզով:

Հիշեցնենք՝ Գոռ Սահակյանը հաղթող էր ճանաչվել նաեւ 2023 թվականին Երեւանում անցկացված Եվրոպայի առաջնությունում:

* * *

Հունահռոմեական ոճի ըմբշամարտի Հայաստանի հավաքականի անդամ **Մալխաս Ամոյանը** կարիերայում երրորդ անգամ դարձել է Եվրոպայի չեմպիոն՝ Բուխարեստում ընթացող առաջնության եզրափակչում 7-0 հաշվով վստահ առավելության հասնելով աշխարհի բրոնզե մեդալակիր, Եվրոպայի կրկնակի փոխչեմպիոն, թուրք Յունուս Բասարի նկատմամբ:

Մալխաս Ամոյանը պայքարը սկսել է 1/8 եզրափակչից, որտեղ 10:1 հաշվով տպավորիչ հաղթանակ է տարել իտալացի Ռիկարդո Վիտո Աբրեսցիայի նկատմամբ:

շարունակությունը՝ էջ 3

Համաշխարհային համաժողովում

սկիզբը՝ էջ 1

Նախարարը նշել է, որ 2022 թվականին հաստատվել է ՀՀ կրթության մինչեւ 2030 թվականի զարգացման պետական ծրագիրը, որի նպատակներից է ազգային եւ համամարդկային արժեքների վրա հիմնված, Հայաստանի Հանրապետության զարգացմանը միտված արդյունավետ եւ միջազգայնորեն մրցունակ կրթական համակարգի ձեւավորումը, որը կյանքի բոլոր փուլերում յուրաքանչյուրին հնարավորություն կտա ստանալու իր կարիքներին եւ ընդունակություններին համապատասխան որակյալ կրթություն:

Նախարարն ընդգծել է, որ ծրագրի նպատակի իրականացման համար սահմանվել են մի շարք ռազմավարական ուղղություններ, որոնցից մեկն է համընդհանուր ներառական սովորողակենտրոն եւ մասնակցային կրթական միջավայրի ստեղծումը: Սա, ըստ նախարարի, յուրաքանչյուր քաղաքացու համար կյանքի բոլոր փուլերում հասանելի կդարձնի իր զարգացման եւ անձնային առանձնահատկություններից բխող եւ քաղաքացիական համագործակցությանը նպաստող որակյալ եւ արդյունավետ կրթական ծառայությունները Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում:

Ժաննա Անդրեասյանը նաեւ նշել է, որ շարունակական կրթությունը չի կարող դիտարկվել մշակութային բազմազանության հայեցակարգից դուրս: Այսպիսով, Հայաստանի Հանրապետությունը վերջին տարիներին քայլեր է ձեռնարկել՝ խթանելու ժամանակակից արվեստի ոլորտի զարգացումը՝ կիրառելով մշակութային բազմազանության ապահովմանը նպատակաուղղված միջոցներ եւ համատեղելով ֆորմալ ու ոչ ֆորմալ մշակութային կրթությունը:

ՅՈՒՆԵՍԿՕ-ի՝ մշակույթի եւ արվեստի կրթության համաշխարհային համաժողովում ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանն անդրադարձ է կատարել նաեւ Լեռնային Ղարաբաղի քաղաքացիական բնակչության էթնիկ զտումների եւ բռնի տեղահանման համատեքստում կրթության իրավունքի իրացմանը: Նա նշել է, որ նախարարությունը գործադրել եւ շարունակում է գործադրել բոլոր ջանքերը՝ ապահովելու ԼՂ-ից բռնի տեղահանված բնակչության լիարժեք ինտեգրումը կրթական գործընթացին:

Նախարարը կարեւորել է միջազգային հանրության արձագանքը Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանվածների մշակութային եւ կրթական իրավունքների պաշտպանության ապահովման հարցում եւ շնորհակալություն հայտնել՝ ՅՈՒՆԵՍԿՕ-ի փաստահավաք առաքելությունը Հայաստան ուղարկելու համար՝ գնահատելու բռնի տեղահանվածների կրթական կարիքները:

Նշենք նաեւ՝ համաժողովի արդյունքներով ընդունվելու է *«Մշակույթի եւ արվեստի կրթության շրջանակ»* փաստաթուղթը, որի նպատակն է՝ առաջարկել նոր ուղիներ՝ բարելավելու, խորացնելու եւ ընդլայնելու կրթության եւ մշակույթի ոլորտների միջեւ համագործակցությունը՝ միաժամանակ օգտագործելով թվային տեխնոլոգիաները՝ արագացնելու 2030 օրակարգով սահմանված համաշխարհային զարգացման ներկա եւ ապագա նպատակների իրագործումը:

Այցի ընթացքում ԿԳՄՍ նախարարն ունեցել է նաեւ երկկողմ հանդիպումներ:

Հանդիպումներ՝ այցի շրջանակում

ՀՀ ԿԳՄՍ նախարար **Ժաննա Անդրեասյանն** Արաբական Միացյալ Էմիրություններ կատարած աշխատանքային այցի շրջանակում հանդիպել է ԱՄԷ մշակույթի նախարար **Շեյխ Սալեմ բին Խալիդ Ալ Քասիմիի** հետ: Հանդիպմանը ներկա է եղել նաեւ ԱՄԷ-ում ՀՀ դեսպան **Կարեն Գրիգորյանը:**

ԱՄԷ մշակույթի նախարարը ողջունել է ՀՀ ԿԳՄՍ նախարարին եւ շնորհակալություն հայտնել այցի, ինչպես նաեւ արդյունավետ համագործակցության համար: Նախարար Ժաննա Անդրեասյանն ընդգծել է Հայաստանի եւ ԱՄԷ միջպետական հարաբերություններում մշակութային համագործակցության կարեւորությունը:

Կողմերը կարեւորել են երկկողմ ծրագրերի շարունակական իրականացումը՝ մշակույթի ոլորտում փորձի փոխանակման եւ համատեղ մշակութային միջոցառումների կազմակերպման տեսանկյունից:

Կողմերը քննարկել են նաեւ ներկայում շրջանառվող *«Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության եւ Արաբական Միացյալ Էմիրությունների մշակույթի նախարարության միջեւ մշակույթի ոլորտում 2024-2027 թթ. համագործակցության մասին»* գործնական ծրագրի նախագիծը եւ պայմանավորվել քայլեր ձեռնարկել դրա վերջնականացման եւ ստորագրման ուղղությամբ:

Հանդիպման ընթացքում ՀՀ ԿԳՄՍ նախարարն անդրադարձել է նաեւ Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված բնակչության մշակութային իրավունքների ապահովման եւ ԼՂ տարածքում հայկական մշակութային ժառանգության պահպանության հարցերին:

Հանդիպման ընթացքում կողմերը քննարկել են նաեւ երկկողմ եւ բազմակողմ ձեւաչափով համագործակցությանը վերաբերող մի շարք այլ հարցեր:

* * *

Արաբական Միացյալ Էմիրություններ կատարած աշխատանքային այցի շրջանակում ՀՀ ԿԳՄՍ նախարար **Ժաննա Անդրեասյանն** այցելել է Աբու Դաբիի համալսարան եւ հանդիպում ունեցել ռեկտոր **Դասան Աուադի հետ:**

Հանդիպման ընթացքում կողմերը քննարկել են Աբու Դաբիի համալսարանի եւ ՀՀ բուհերի միջեւ համագործակցության հաստատման եւ փոխանակման ծրագրերի իրականացմանն առնչվող հարցերը:

Քննարկման ընթացքում նախարարն անդրադարձել է բարձրագույն կրթության ոլորտում տեղի ունեցող բարեփոխումներին եւ ՀՀ կրթության՝ մինչեւ 2030 թվականի զարգացման պետական ծրագրին: Նա ներկայացրել է ակադեմիական քաղաքի նախագիծը՝ այդ համատեքստում կարեւորելով ԱՄԷ փորձը: Անդրադարձ է

կատարվել նաեւ հետազոտական ծրագրերին եւ դրանց շրջանակում ՀՀ բուհերի հետ համագործակցության հնարավոր ուղղություններին:

Նախարար Ժաննա Անդրեասյանը նաեւ շրջայց է կատարել համալսարանի տարածքում եւ ծանոթացել բուհի ենթակառուցվածքներին:

շարունակությունը՝ էջ 3

Գիրք նվիրիր

Թումանյանական շնչով

Փետրվարի 19-ը Հովհաննես Թումանյանի ծննդյան օրն է: Հայաստանի Հանրապետությունում շուրջ 15 տարի այս օրը նշվում է՝ որպես Գիրք նվիրելու օր:

Տոնի կապակցությամբ՝ ՀՀ ԿԳՄՍ նախարար **Ժաննա Անդրեասյանն** ու նախարարի տեղակալ **Ալֆրեդ Քոչարյանն** այցելել են Հովհաննես Թումանյանի թանգարան, որը ժամանակավորապես տեղակայվել է *«Հրանտ Մաթեւոսյան»* մշակութային կենտրոնում:

Ժաննա Անդրեասյանը շրջայց է կատարել եւ ծանոթացել թանգարանի գործունեությանը՝ հյուրընկալող տանիքի ներքո: Օրվա խորհրդի համաձայն՝ նախարարը գրքեր է նվիրել թանգարանին:

Ժաննա Անդրեասյանը ներկա է եղել նաեւ *«Ճամփորդ հոգին», «Ու նայե՛ս, նայե՛ս»* խորագրով ցուցահանդեսի բացմանը: Կտորների վրա արտացոլված լուսանկարները, գրառումներն ու բանաստեղծական տողերը պատմում են Հովհաննես Թումանյանի եւ Հրանտ Մաթեւոսյանի ճանապարհորդությունների մասին:

Ցուցադրությանը բացման խոսքով հանդես են եկել Հովի. Թումանյան թանգարանի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար **Լուսինե Ղարախանյանը** եւ *«Հրանտ Մաթեւոսյան»* մշակութային կենտրոնի ղեկավար **Դավիթ Մաթեւոսյանը:**

Միջոցառման շրջանակում տեղի է ունեցել Հովհաննես Թումանյանի երկերի լիակատար ժողովածուի 5-րդ հատորի շնորհանդեսը:

Ժողովրդական արվեստների թանգարանում

Գիրք նվիրելու օրվա շրջանակում՝ ՀՀ ԿԳՄՍ նախարարի տեղակալ **Արաքսիա Սվաջյանն** այցելել է Հովի. Շարամբեյանի անվան ժողովրդական արվեստների թանգարան:

Թանգարանը հյուրընկալել էր հեքիաթագիր **Արփի Մաղաքյանին,** որը Երեւանի թիվ 194 հիմնական դպրոցի 5-րդ դասարանի աշակերտներին պատմել է իր հեղինակած հեքիաթներից մեկը՝ *«Արտավազդ արքայի հեքիաթը»:*

Հեղինակն աշակերտների համար ընթերցել է հետաքրքիր պատմություններ, որոնք վերաբերել են Արտավազդ արքայի կառավարման ժամանակաշրջանին: Հեքիաթի միջոցով աշակերտները ծանոթացել են մեր պատմության իրական հերոսներին:

Ընթերցանության ավարտից հետո ծավալվել է քննարկում առ այն, թե հեքիաթներն իրականում ինչ են սովորեցնում մարդկանց:

Փոխնախարար Արաքսիա Սվաջյանը եւ աշակերտները նաեւ շրջայց են կատարել թանգարանում, որն ուղեկցվել է թումանյանական մտքերով կազմված ուսուցողական քվեստներով, երգ ու պարով եւ անակնկալ մրցանակներով:

Նախարարի տեղակալը ծանոթացել է թանգարանի պայմաններին, ցուցադրություններին եւ անցկացվող միջոցառումներին:

Հանդիպումներ՝ այցի շրջանակում

սկիզբը՝ էջ 2

Արաբական Միացյալ Էմիրություններ կատարած այցի շրջանակում **Ժաննա Անդրեասյանն** այցելել է Աբու Դաբիի *«Լուվր»* թանգարան:

Նախարարը շրջայց է կատարել թանգարանում, դիտել ցուցադրությունը, ինչպես նաեւ հանդիպել տնօրեն **Մանուել Ռաբատեի** հետ:

Տնօրենի հետ հանդիպման ընթացքում քննարկվել է Աբու Դաբիի *«Լուվրի»* եւ Հայաստանի թանգարանների միջեւ համագործակցության ընդլայնման, մշակութային եւ կրթամշակութային ծրագրերի իրականացման հնարավորությունը:

Նախարարն անդրադարձել է նաեւ Հայաստանում ներդրվող մշակութային հաստատությունների կառավարման նոր մոդելին: Ձեռք է բերվել փոխադարձ այցեր կազմակերպելու, փորձի փոխանակման եւ համատեղ նախագծեր մշակելու պայմանավորվածություն:

Հանդիպման ընթացքում կողմերը քննարկել են փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող մի շարք այլ հարցեր:

շարունակությունը՝ էջ 4

Հայ մարզիկների հաղթարշավը

սկիզբը՝ էջ 2

Քառորդ եզրափակչում հայ ըմբիշը 3:2 հաշվով առավելության է հասել անկախ երկրների դրոշի ներքո հանդես եկող ռուսաստանցի Ադլետ Տյուլուբաեւի նկատմամբ, իսկ կիսաեզրափակչում 2:1 հաշվով ուժեղ է գտնվել մոլդովացի Ալեքսանդրին Գուտուից:



Հայաստանի հավաքականի կազմում ԵԱ-ի առաջին մեդալը նվաճել է 55 կգ քաշային **Մանվել Խաչատրյանը,** որն առաջին անգամ է մասնակցում մեծահասակների Եվրոպայի առաջնությանը: Բրոնզե մեդալի համար գոտեմարտում Խաչատրյանը մրցել է բուլղարացի Ստեֆան Հրիստով Գրիգորովի հետ եւ ժամանակից շուտ 8:0 հաշվով հաղթանակ տարել:

* * *

Հունահռոմեական ոճի ըմբշամարտի աշխարհի, Եվրոպայի եւ Օլիմպիական խաղերի չեմպիոն **Արթուր Ալեքսանյանը** կարիերայում 7-րդ անգամ հռչակվել է Եվրոպայի չեմպիոն՝ Բուխարեստում ընթացող առաջնության եզրափակչում 6:3 հաշվով առավելության հասնելով ռուսաստանցի Մագոմեդ Մուրտազալիեւի նկատմամբ:

Ալեքսանյանը եզրափակիչ էր դուրս եկել՝ կիսաեզրափակչում 5:1 հաշվով հաղթելով բելառուս Աբուբակար Խասլախանավին: Հայ ըմբիշը պայքարը սկսել էր 1/8 եզրափակչից, որտեղ 9:1 հաշվով ժամանակից շուտ հաղթել էր թուրք Բեյտուլա Կահիդագինին, իսկ քառորդ եզրափակչում 8:3 հաշվով առավելության էր հասել Նիդերլանդների ներկայացուցիչ Թայրոն Շտենկերբուրգի նկատմամբ:

Հայաստանի մյուս ներկայացուցիչ, Փարիզի 2024 թվականի Օլիմպիական խաղերի ուղեգիր նվաճած **Սլավիկ Գալստյանը** գոտեմարտել է Եվրոպայի առաջնության բրոնզե մեդալի համար, սակայն 4:5 հաշվով ցավալի պարտություն է կրել:

Այսպիսով, Հայաստանի հունահռոմեական ոճի ըմբշամարտի հավաքականը, **Արմեն Բաբալարյանի** գլխավորությամբ, Եվրոպայի առաջնությունում ելույթներն ավարտել է 2 ոսկե եւ 1 բրոնզե մեդալով՝ թիմային հաշվարկում զբաղեցնելով երրորդ հորիզոնականը:

* * *

Ազատ ոճի ըմբշամարտի Հայաստանի հավաքականը, **Հաբեթնակ Կուրղինյանի** գլխավորությամբ, 2 ոսկե, 1 բրոնզե մեդալ է նվաճել Բուխարեստում անցկացված Եվրոպայի առաջնությունում: Մեր ընտրանին թիմային պայքարում զբաղեցրել է 4-րդ հորիզոնականը:

Հայաստանի թիմի կազմում ԵԱ-ի չեմպիոնությունը նվաճել են **Արսեն Հարությունյանն** ու **Արման Անդրեասյանը:**

57 կգ քաշայինների եզրափակչում Հարությունյանն ընդամենը 52 վայրկյանում 10:0 հաշվով փայլուն հաղթանակ է տարել Թուրքիայի ներկայացուցիչ Մուհամետ Քարավուսի նկատմամբ եւ կարիերայում 4-րդ անգամ հռչակվել Եվրոպայի չեմպիոն:

շարունակությունը՝ էջ 4

Հայ մարզիկների հաղթարշավը

սկիզբը՝ էջ 3

Հայ ըմբիշը ԵԱ-ում պայքարը սկսել էր քառորդ եզրափակչից, որտեղ ժամանակից շուտ 10:0 հաշվով վստահ հաղթանակ էր տարել Ուկրաինայի ներկայացուցիչ Կամիլ Կերիմովի նկատմամբ: Կիսաեզրափակչում էլ նույն հաշիվը գրանցվել էր Ադրբեջանի ներկայացուցիչ Իսլամ Բազարգանովի հետ գոտեմարտում:



Արման Անդրեասյանը 70 կգ քաշայինների եզրափակչում 7:3 հաշվով տպավորիչ հաղթանակ է տարել Վրաստանի ներկայացուցչի նկատմամբ՝ հաղթական միավորները վաստակելով վերջին վայրկյաններին: Հայ ըմբիշը եզրափակիչ էր դուրս եկել՝ կիսաեզրափակչում 8:5 հաշվով առավելության հասնելով Հունգարիան ներկայացնող Իսմաիլ Մուսուկաեւի նկատմամբ:

Անդրեասյանը կարիերայում առաջին անգամ է դարձել Եվրոպայի չեմպիոն:

Հայաստանի մյուս ներկայացուցիչը՝ 61 կգ քաշային **Մեժլում Մեժլումյանը** դարձել է ԵԱ-ի բրոնզե մեդալակիր՝ նվաճելով իր առաջին մեդալը մեծահասակների Եվրոպայի առաջնություններում: Վճռորոշ գոտեմարտում Մեժլում Մեժլումյանը մրցել է Գերմանիան ներկայացնող Նիկլաս Շտեշելի հետ եւ 7:5 հաշվով տպավորիչ հաղթանակ է տարել:



* * *

Բուլղարիայի մայրաքաղաք Սոֆիայում ընթացող Եվրոպայի առաջնությունում 96 կգ քաշայինների պայքարում պատվո հարթակի առաջին երկու աստիճաններին կանգնել են հայ ծանրորդները: **Հակոբ Մկրտչյանը** երկամարտի 375 կգ արդյունքով (166+209) երկրորդ անգամ նվաճել է Եվրոպայի չեմպիոնությունը, իսկ **Դավիթ Հովհաննիսյանը** երկամարտում գրանցել է 374 կգ արդյունք (169+205) եւ դարձել արծաթե մեդալակիր:

շարունակությունը՝ էջ 5

Հանդիպումներ՝ այցի շրջանակում

սկիզբը՝ էջ 3

Արաբական Միացյալ Էմիրություններ այցի շրջանակում ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարար Ժաննա Անդրեասյանը երկկողմ հանդիպում է ունեցել Համաշխարհային կառավարական գագաթնաժողովի շրջանակում ԱՄԷ-ում գտնվող՝ Վրաստանի խորհրդարանի մշակույթի մշտական հանձնաժողովի նախագահ Էլիսո Բոլկվաձեի հետ:

Հանդիպման ընթացքում կողմերը քննարկել են համատեղ ծրագրերի իրականացման հնարավորությունը: Նշվել է, որ 2024 թ. մայիսին Երեւանում նախատեսվում է ՀՀ ԱԺ գիտության, կրթության, մշակույթի, երիտասարդության եւ սպորտի մշտական հանձնաժողովի եւ Վրաստանի խորհրդարանի մշակույթի մշտական հանձնաժողովների համատեղ նիստը, որի ընթացքում նախատեսվում է նաեւ կազմակերպել համերգային ծրագիր *«Արամ Խաչատրյան»* համերգասրահում՝ Է. Բոլքվաձեի կատարմամբ:

Անդրադարձ է կատարվել նաեւ Ս.Փարաջանովի հոբելյանի շրջանակում կինոյի ոլորտում համատեղ կինոփառատոն կազմակերպելու հարցին: Նշվել է, որ կինոյի ոլորտը ակտիվ զարգացում է ապրում երկու երկրներում: Կողմերը փոխանակել են տեղեկություններ իրենց երկրներում մշակույթի եւ մշակութային կրթության ոլորտներում ընթացող բարեփոխումների մասին:

Նախարար Ժաննա Անդրեասյանը նշել է, որ մշակութային կրթությունն առանձնահատուկ տեղ է զբաղեցնում ՀՀ մշակույթի պահպանության, զարգացման եւ հանրահռչակման՝ 2023-2027 թթ. ռազմավարությունում: Պայմանավորվածություն է ձեռք բերվել աշխատանքներ տանել համապատասխան կապեր ստեղծելու եւ փորձի փոխանակման ուղղությամբ:

Հանդիպման ընթացքում կողմերը քննարկել են երկկողմ հետաքրքրություն ներկայացնող մի շարք այլ հարցեր:

Մանկավարժական կրթության բարեփոխումն առանցքային խնդիր է

սկիզբը՝ էջ 1

Ծրագրի տեւողությունը 3 տարի է. ֆինանսավորումն ամբողջությամբ իրականացվում է Եվրամիության *«Էրազմուս»* ծրագրի շրջանակում: Վերանայվելու եւ ամբողջովին վերափոխվելու է բակալավրի, մագիստրոսական 5-ական եւ 2 կարճաժամկետ ծրագիր:

Ծրագրի համակարգողը Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանն է, գործընկեր բուհերն են ԵՊՀ-ն եւ Շիրակի պետական համալսարանը, ինչպես նաեւ երկու մանկավարժական բուհ՝ Մոլդովայից, որոնք ծրագրի հիմնական շահառուներն են: Ծրագրի շրջանակում նախատեսվում է մշակել ուսուցչի մասնագիտության հայեցակարգը՝ 2027-2035 թվականների համար:

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարար Ժաննա Անդրեասյանը շնորհավորել է կարեւոր ծրագրի մեկնարկի առիթով եւ ընդգծել՝ կրթության ոլորտի մեծածավալ բարեփոխումները պահանջում են, որպեսզի այդ փոփոխություններն ունենան իրենց տրամաբանական արտացոլումը մանկավարժական կրթության հայեցակարգում եւ բովանդակության մեջ:

«Մանկավարժական կրթության բարեփոխումը խիստ առանցքային խնդիր է. շատ բան կարող է փոխվել, բայց դպրոցում ամենակարեւոր մարդը շարունակում է մնալ ուսուցիչը, որի ազդեցությունը երեխաների եւ կրթական արդյունքի ու բովանդակության վրա անգնահատելի է: Անչափ կարեւոր է, որ մանկավարժական կրթության որակն ու բովանդակությունը համահունչ լինեն ժամանակակից մարտահրավերներին»,- ասել է Ժաննա Անդրեասյանը՝ շնորհակալություն հայտնելով կարեւոր նախաձեռնության հեղինակներին:

ԿԳՄՍ նախարարը նաեւ ընդգծել է ծրագրի կարեւորությունը կրթության ոլորտի մեկ այլ մակարդակի՝ բարձրագույն կրթության բարեփոխումների հայեցակարգում: Նրա գնահատմամբ՝ ամենակարեւոր աշխատանքը բարձրագույն կրթության վերափոխումն է, որպեսզի այն դառնա մրցունակ, միջազգայնորեն ճանաչելի եւ համադրելի: Այս համատեքստում Ժաննա Անդրեասյանը կարեւորել է այն հանգամանքը, որ ծրագիրն իրականացվելու է 5 գործընկեր բուհերի հետ համադրմամբ եւ ՀՊՄՀ համակարգմամբ:

«Սա շատ կարեւոր աշխատանք է, որն ի սկզբանե աջակցելու է թե՛ միջազգայնացմանը, թե՛ բարձրագույն կրթության որակական փոփոխությանը: Կրթության ոլորտի բարեփոխումների առանցքում բարձրագույն կրթությունն ունի առանցքային նշանակություն: Այս իմաստով՝ հատկապես կարեւոր է ծրագրի շրջանակում մշակվելիք մանկավարժական կրթության հայեցակարգը, որը, կարծում եմ, ուղենշային փաստաթուղթ կդառնա մեր երկրում եւ ոչ միայն՝ մանկավարժական կրթության կազմակերպման եւ առաջնորդման համար»,- ասել է Ժաննա Անդրեասյանը՝ հայտնելով նախարարության պատրաստակամությունն աջակցելու ծրագրի ընթացքին:

Ծրագրի մեկնարկի առիթով՝ ներկաներին ողջունել է նաեւ ԿԳՄՍ նախարարի տեղակալ Արաքսիա Սվաջյանը՝ ընդգծելով. *«Այսօր դպրոցը եւ մանկավարժությունը մարտահրավերային փուլում են. գտնվելով տեխնոլոգիական հեղափոխության ժամանակաշրջանում, երբ ամեն ինչ շատ արագ է զարգանում, դպրոցը եւ ուսուցիչը պետք է հասցնեն համընթաց քայլել: Հետեւաբար, ուսուցչի դերը, նրա կողմից կիրառվող մեթոդները, դասի կառավարման իրականացումը բոլորովին այլ սկզբունքների վրա պետք է հիմնված լինեն»,*- ասել է նախարարի տեղակալը՝ վստահություն հայտնելով, որ ծրագրի շրջանակում իրականացվող բոլոր գործողությունները միտված են լինելու ուսուցիչների՝ անհրաժեշտ հմտություններով ու կարողություններով զինմանը:

Խ. Աբովյանի անվան մանկավարժական համալսարանի ռեկտոր Սրբուհի Գեւորգյանի խոսքով՝ հատուկ վերափոխման եւ վերանայման են ենթարկվելու 3 հիմնական ուղղություններ՝ օտար լեզուների, հատուկ եւ ներառական մանկավարժության, ԲՏՃՄ առարկաների ոլորտների բոլոր ծրագրային մոտեցումները եւ մեթոդները, որոնց համար կձեւավորվի հստակ գործիքակազմ:

Հայաստանում ԵՄ պատվիրակության համագործակցության բաժնի ղեկավար Ֆրանկ Հեսսն իր հերթին նշել է, որ ծրագրի շրջանակում իրականացվող կանաչ եւ թվային կրթությունն ապահովում է հասարակության կայուն զարգացումը, ինչն էլ առնչվում է մանկավարժական կրթության հիմնահարցերին:

Հայաստանում *«Էրազմուս+»* ծրագրի ազգային գրասենյակի համակարգող Լանա Կառլովան, կարեւորելով մանկավարժների գործունեությունը, հույս է հայտնել, որ ծրագիրը կօգնի ուսուցիչներին իրենց աշխատանքն ավելի հստակ եւ արդյունավետ կազմակերպել:

Խորհրդարանական լսումներ

Վաղ ամուսնությունների վնասակար հետեւանքների շուրջ

Աժ մարդու իրավունքների պաշտպանության եւ հանրային հարցերի մշտական հանձնաժողովը *«Ամուսնության տարիքային շեմը բարձրացնելու նպատակով օրենսդրական բարեփոխումները՝ մարդու հիմնարար իրավունքների պաշտպանության համատեքստում»* թեմայով խորհրդարանական լսումներ է նախաձեռնել, որի շրջանակում զեկույցով հանդես է եկել նաեւ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարի տեղակալ **Արաքսիա Սվաջյանը:**

ԿԳՄՍ նախարարի տեղակալը, կարեւորելով հիմնախնդրի քննարկումը, ընդգծել է՝ վաղ ամուսնություններն առաջին հերթին արտահայտվում են երեխաների՝ պարտադիր կրթությունից դուրս մնալու փաստով, ինչը, Արաքսիա Սվաջյանի վստահեցմամբ, խիստ մտահոգիչ է: Նրա խոսքով՝ նախաձեռնությունը շատ կարեւոր է՝ վաղ ամուսնությունների հետեւանքով առաջացող խնդիրները կանխարգելելու համատեքստում:

Արաքսիա Սվաջյանը տեղեկացրել է՝ 2023-2024 ուսումնական տարվա դրությամբ հանրակրթական ուսումնական հաստատություններում սովորում են ազգությամբ եզդի 1319 աղջիկներ: 2023 թվականի ընթացքում 171 սովորող դուրս է եկել կրթական համակարգից:

«Երեխաների՝ կրթությունից դուրս մնալու շարժն ակնհայտ է ավագ դպրոցի տարիներին: Մասնավորապես՝ 10-րդ դասարանում նախորդ տարիների համեմատ դիտվում է սովորողների թվի 52,7 %-ի չափով նվազում, 11-րդ դասարանում՝ 69,5 %, իսկ 12-րդ դասարանում՝ 88,2 %: Հասկանում ենք, թե սա որքան վատ ցուցանիշ է»,- նշել է Արաքսիա Սվաջյանն ու ներկայացրել նաեւ բարձրագույն ուսումնական հաստատություններում տիրող իրավիճակը:

Նախարարի տեղակալի խոսքով՝ վերջին 3 տարիների ընթացքում ազգային փոքրամասնությունների, մասնավորապես՝ ազգությամբ եզդի սովորողների թվի առումով բուհերում աճ է նկատվում. *«2020/21 ուսումնական տարում բակալավրի կրթական աստիճանում ունեցել ենք ազգությամբ եզդի 34 ուսանողներ, որոնցից 9-ը՝ իգական սեռի ներկայացուցիչ: Մագիստրատուրայում կրթությունը շարունակել են ընդամենը 6 եզդի ուսանողներ, բոլորը՝ տղաներ: 2021/22 ուսումնական տարում ուսանողների թիվը փոքր-ինչ ավելացել է. բակալավրում այն կազմել է 40 (13-ը՝ աղջիկ), իսկ մագիստրոսական աստիճանում կրթությունը շարունակել են ընդամենը 5 ուսանողներ: 2022/23 ուսումնական տարում ունեցել ենք բակալավրի 55 ուսանողներ, որոնցից 17-ը՝ աղջիկներ: Մեկ տղա էլ կրթությունը շարունակել է մագիստրատուրայում»:*

Արաքսիա Սվաջյանն անդրադարձել է նաեւ այն քայլերին, որոնք ԿԳՄՍ նախարարությունը ձեռնարկում է՝ իրավիճակը կանխելու նպատակով: Այս համատեքստում նախարարի տեղակալն անդրադարձել է հանրակրթության պետական նոր չափորոշչի ներդրման շրջանակում դպրոցներում առողջ ապրելակերպի դասավանդման պարտադիր խմբակի գործունեությանը:

«Այս խմբակի շրջանակում երեխաները տարաբնույթ թեմաներով ուսումնասիրություններ են կատարում, եւ սա ավելի ինտերակտիվ ձեւաչափով իրականացվող ուսումնական գործընթաց է երեխաների համար՝ թույլ տալով նրանց մոտ հեշտությամբ ձեւավորել բոլոր այն հմտությունները, որոնք անհրաժեշտ են կյանքում հաջողությունների հասնելու համար՝ նվազագույն պատկերացումների տեսանկյունից»,- ասել է Արաքսիա Սվաջյանը:

շարունակությունը՝ էջ 6

Հայ մարզիկների հաղթարշավը

սկիզբը՝ էջ 4

Նշենք՝ պոկում վարժության արդյունքներով Հովհաննիսյանը փոքր ոսկե մեդալ է նվաճել՝ գլխավերեւում պահելով 169 կգ կշռող ծանրաձողը, իսկ Մկրտչյանը 166 կգ արդյունքով դարձել է փոքր արծաթե մեդալակիր: Հրում վարժության արդյունքներով Մկրտչյանը նվաճել է նաեւ փոքր ոսկե (209 կգ), իսկ Հովհաննիսյանը՝ փոքր արծաթե մեդալը (205 կգ):

Մրցահարթակ դուրս եկած մեր մյուս ներկայացուցիչը՝ կանանց հավաքականի անդամ **Լիանա Գյուրջյանը,** երկամարտի 220 կգ արդյունքով (95+125) զբաղեցրել է 4-րդ հորիզոնականը:

Ավելի վաղ Հայաստանի տղամարդկանց հավաքականի անդամ, 81 կգ քաշային **Ռաֆիկ Հարությունյանն** էլ դարձել է Եվրոպայի առաջնության բրոնզե մեդալակիր՝ երկամարտում ցույց տալով 336 կգ (154+182) արդյունք: Պոկում վարժության արդյունքներով էլ Ռաֆիկ Հարությունյանը փոքր բրոնզե մեդալ է նվաճել՝ երկու հաջող մոտեցումներից հետո գլխավերեւում պահելով 154 կգ կշռող ծանրաձողը:



Նշենք՝ Հարությունյանի պարգեւատրումն իրականացրել է միջազգային կարգի մրցավար **Արայիկ Ալավերդյանը:**

Եվրոպայի առաջնությունում ելույթներն ավարտել է նաեւ Եվրոպայի 2016 թվականի չեմպիոն, աշխարհի բրոնզե մեդալակիր **Անդրանիկ Կարապետյանը**՝ երկամարտում գրանցելով 365 կգ արդյունք (170+195) եւ զբաղեցնելով 5-րդ տեղը:

* * *

Հայաստանի սպորտային մարմնամարզության հավաքականը 1 ոսկե եւ 1 արծաթե մեդալ է նվաճել Եգիպտոսի մայրաքաղաք Կահիրեում անցկացված աշխարհի գավաթի խաղարկության առաջին փուլում:

Գավաթի խաղարկության առաջին փուլի հաղթողի կոչմանն արժանացել է աշխարհի ու Եվրոպայի չեմպիոն, Օլիմպիական խաղերի բրոնզե մեդալակիր **Արթուր Դավթյանը:**

Դավթյանը հավասարը չի ունեցել հենացատկի վարժությունում՝ եզրափակչում հավաքելով 14,933 միավոր:

շարունակությունը՝ էջ 6

Աջակցություն

1897 ուսանող ներգրավված է համապատասխան կրթական ծրագրերում

ՀՀ ԿԳՄՍՆ բարձրագույն կրթության եւ գիտության կոմիտեի նախագահ **Սարգիս Հայոցյանը** Կառավարության *«Հումանիտար կենտրոնում»* ներկայացրել է Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված մեր հայրենակիցներին ցուցաբերվող աջակցության աշխատանքների ընթացքը:

Սարգիս Հայոցյանն անդրադարձել է ԼՂ-ից բռնի տեղահանման արդյունքում բարձրագույն կրթություն ստացող անձանց կրթական իրավունքի վերականգնման ուղղությամբ ՀՀ կառավարության կողմից իրականացվող երկու ծրագրերին:

Նրա խոսքով՝ ՀՀ կառավարության՝ 2023 թվականի թիվ 1762-Ն որոշմամբ հաստատվել է սեպտեմբերի 19-ից հետո ԼՂ-ից բռնի տեղահանված ուսանողների 2023/24 ուսումնական տարվա համար ուսման վարձի լրիվ կամ մասնակի փոխհատուցման նպատակով կրթաթոշակի տրամադրման կարգը եւ տրամադրվելիք կրթաթոշակի առավելագույն չափերը՝ ըստ կրթական ծրագրերի:

«Ծրագրի շրջանակում Լեռնային Ղարաբաղում սովորող ուսանողները ներգրավվել են ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատությունների համապատասխան կամ հարակից կրթական ծրագրերում: ԿԳՄՍՆ-ում հավաքագրված տվյալներով՝ ունենք ԼՂ-ից բռնի տեղահանված 4640 սովորողներ, որոնցից 2116-ը ԼՂ-ում սովորել են բարձրագույն, իսկ 2524-ը՝ նախնական կամ միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում: 2024 թվականի հունվարի դրությամբ՝ ԼՂ-ի բուհերում սովորող 1897 ուսանող արդեն իսկ ներգրավված է ՀՀ պետական բուհերի համապատասխան կամ հարակից կրթական ծրագրերում»,- ներկայացրել է Սարգիս Հայոցյանը:

Բարձրագույն կրթության եւ գիտության կոմիտեի նախագահն անդրադարձել է նաեւ ՀՀ կառավարության կողմից իրականացվող երկրորդ ծրագրին, որի համաձայն՝ ուսման վարձի փոխհատուցում է նախատեսվում ՀՀ բուհերի ուսանող հանդիսացող Լեռնային Ղարաբաղի այն քաղաքացիների համար, որոնց ընտանիքի անդամներն են բռնի տեղահանվել:

«Կառավարության համապատասխան որոշմամբ՝ հաստատվել է ՀՀ նախնական, միջին, բարձրագույն եւ հետբուհական մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների վճարովի համակարգում մինչեւ 2023 թվականի սեպտեմբերի 19-ն ընդգրկված սովորողների ուսման վարձի փոխհատուցման տրամադրման կարգը: Այս ծրագրի շրջանակում աջակցություն է ստանում 844 շահառու»,- նշել է Սարգիս Հայոցյանը՝ շեշտելով, որ թվային տվյալները պարբերաբար թարմացվում են:

Հայ մարզիկների հաղթարշավը

սկիզբը՝ էջ 5

Մարմնամարզիկ **Վահագն Դավթյանն** էլ Կահիրեի աշխարհի գավաթի խաղարկությունում դարձել է արծաթե մեդալակիր: Օղակների վարժության եզրափակչում հայ մարզիկը հավաքել է 14.500 միավոր եւ զբաղեցրել է երկրորդ տեղը:

Այս վարժությունում Հայաստանի մյուս ներկայացուցիչ **Արթուր Ավետիսյանը,** 14.470 միավորով, զբաղեցրել է 4-րդ հորիզոնականը:

Հայաստանի հավաքականի կազմում նժույգ-թափեր վարժության որակավորման փուլին մասնակցել են **Գագիկ Խաչիկյանը** եւ **Հարություն Մերդինյանը,** որոնց, սակայն, չի հաջողվել դուրս գալ հաջորդ փուլ:

Աշխարհի գավաթի խաղարկության փուլերը վարկանիշային են Փարիզի 33-րդ ամառային Օլիմպիական խաղերի համար:

Դպրոցի զարգացման ծրագրի կազմման նոր ձեւաչափ

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարի հրամանով՝ փոփոխություն է կատարվել ԿԳՄՍ նախարարի՝ 2022 թվականի սեպտեմբերի 22-ի *«Պետական հանրակրթական ուսումնական հաստատության զարգացման ծրագրի մշակման ձեւաչափը եւ զարգացման ծրագրի կատարման ամենամյա հաշվետվության կատարողականի ցուցանիշներն ու պահանջները հաստատելու եւ Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարի՝ 2021 թվականի հունվարի 15-ի N 16-Ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին»* N 35-Ն հրամանում:

Նոր փոփոխությամբ սահմանվել է ուսումնական հաստատության զարգացման ծրագրի կազմման նոր ձեւաչափ, որը, մասնավորապես, վերաբերում է զարգացման ծրագրի կատարման ամենամյա հաշվետվության կատարողականի ցուցանիշներն ու պահանջները ներկայացնելուն: Մասնավորապես՝ առանձին սյունակներով անհրաժեշտ է ներկայացնել՝

- նպատակներին ուղղված գործողությունների արդյունքները եւ դրանց հիմքերը,

- չկատարված կամ թերի կատարված գործողությունները,

- դրանց պատճառները,

- փոփոխությունների եւ լրացումների առաջարկություններ,

- հաղորդակցության եւ համայնքի հետ հարաբերությունների կազմակերպման մեխանիզմները:

Հաշվետվությունը պետք է ներառի յուրաքանչյուր կատարողական ցուցանիշի կատարման մասին անհրաժեշտ փաստացի տվյալներ, հիմնավորող փաստաթղթեր, վերլուծություններ, որոնք կցվում են հաշվետվության ձեւաչափին:

Նշենք՝ ծրագիրը հաստատության ռազմավարական փաստաթուղթ է, որի հիման վրա պլանավորվում են ուսումնադաստիարակչական աշխատանքները հաստատությունում: Ծրագիրը կազմվում է 5 տարվա համար եւ ընդգրկում է հետեւյալ բաղադրիչները՝ իրավիճակի վերլուծություն, նպատակների եւ խնդիրների սահմանում, դրանց իրականացումն ապահովող գործողությունները, միջոցները եւ ժամանակացույցը, արդյունքների չափման մեխանիզմները եւ գործիքները, զարգացման ծրագրի ռիսկերը եւ դրանց կանխման հնարավորությունները:

Տեղեկացնենք նաեւ՝ 2024 թվականի փետրվարի 13-ից սկսած՝ պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի պաշտոնի թափուր տեղի համար հայտարարվող մրցույթները կազմակերպելիս անհրաժեշտ է առաջնորդվել վերոգրյալ հրամանով հաստատված զարգացման ծրագրի կազմման նոր ձեւաչափով:

Մայրենի

Կաղի՞ն, թե՞ պնդուկ, չարա՞զ, թե՞ կաղնեղեն

Մեր խոսքում գործածվում են կաղին եւ պնդուկ բառերը: Որոշ տարածաշրջաններում կիրառվում է **պնդուկ**-ը, իսկ որոշներում՝ միայն **կաղին**-ը:

Երբեմն էլ ոմանք պնդում են, որ **կաղին**-ը ուտելի **պնդուկը** չէ, այլ՝ անտառի **խոզակաղինը,** որն ուտում են միայն կենդանիները:

Իրականում, կա կաղնու երկու տեսակ՝ մարդկանց համար ուտելի կաղին, որը նաեւ անվանում են արքայական կաղին, եւ խոզակաղին, որն ուտում են կենդանիները: **Կաղին**-ի հոմանիշը **տկողին**-ն է, սակայն այն հազվադեպ է գործածվում: Ամենից շատ կիրարկվում է **պնդուկ**-ը, իսկ **կաղին**-ը՝ ավելի քիչ:

Պնդուկ-ը փոխառյալ բառ է, այն մեր լեզվին է անցել արաբերենից եւ ծագում է Պոնտոս տեղանունից, որտեղ հատկապես աճում է կաղնու լավ տեսակը (Տե՛ս՝ Ստ. Մալխասյանց, Հայերեն բացատրական բառարան, Երեւան, 1944, h 4, էջ 110): Այդ պտուղը ժամանակին Պոնտոսի գլխավոր բերքն է եղել՝ պոնտական կաղին անունով:

Հ. Աճառյանը նշում է, որ անսովոր չէ, երբ պտուղն անվանում են երկրի անունով: Եվ որպես օրինակ՝ նշում է դեղձը, որը շատերը Պարսկաստանի անունով կոչում են պերսիկ (ռուս. персик), պերսիցիում (լատգpersicum) պեղշ (ֆրգperche) եւ այլն:

Ըստ էդ. Աղայանի՝ **պնդուկ**-ը գավառական բառ է, որի գրական տարբերակը տկողին-ն է (Տե՛ս՝ էդ. Աղայան, Արդի հայերենի բացատրական բառարան, Երեւան, 1976, h 2, էջ 1221): Բառարանագիրը, **կաղին**-ն առանձին գլխաբառով բացատրելով, դարձյալ հիշատակում է **տկողին**-ը (Տե՛ս՝ էդ. Աղայան, Արդի հայերենի բացատրական բառարան, Երեւան, 1976, h 1, էջ 676):

Պնդուկ-ը, որոշ լեզուներում փոխակերպվելով, դարձել է **ֆընդուկ, ֆընդըգ** կամ **ֆընդըխ** եւն:

Ըստ Ստ Մալխասյանցի՝ կաղնետեսակ՝ կաղին են անվանել նաեւ ընկույզը, նուշը եւն:

Կաղնետեսակները Հ. Աճառյանը ներկայացնում է **(ըն)կոյզ ձեւով՝** նշելով ընկույզի մի քանի տեսակ՝ *«ընկոյզ արքայական»՝ «արքայա**կաղին**», «ընկոյզ Հնդկաց»՝ «հնդկական ընկոյզ», «հնդկընկոյզ, «մշկընկոյզ»* եւն (տե՛ս՝ Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, Երեւան, 1926, h 2, էջ 130): Նկատում ենք, որ **ընկույզ**-ը բացատրելիս Հ. Աճառյանը եւս նշել է կաղին-ը՝ արքայակաղին տարբերակով, այսինքն՝ նա եւս կաղինն ու ընկույզը նույնացրել է:

Այլ լեզուներում, ինչպես, օրինակ, ռուսերենում, բոլոր տեսակի կաղինների կամ ընկույզների համար կա մեկ ընդհանուր բառ՝ արեխ (орех), որի հայերեն համարժեքը բառարանագիրը ընկույզ-ն է նշումգ առանձնացվում են ընկույզի (орех) մի քանի տեսակ՝ անտառային (лесной), հնդկական (индийский), հունական (грецкий) եւն (տե՛ս՝ Ա. Ղարիբյան, Ռուս-հայերեն բառարան, Երեւան, 1956, էջ 664):

Հետեւում է, որ բոլոր կաղնետեսակները կամ ընկույզի տեսակները մեկ բառով կարելի է անվանել **կաղնեղեն** կամ **ընկուզեղեն** օտար **չարազեղեն**-ի փոխարեն: Բացատրական բառարաններում այն բացատրված է որպես ճաշից հետո մատուցվող **աղանդեր՝** մրգեղեն, անուշեղեն եւն, որը ֆրանսերեն **դեսերտ**-ն է (dessert): **Չարազ**-ը պարսկերենից է անցել (տե՛ս Ստ. Մալխասյանց, Հայերեն բացատրական բառարան, Երեւան, 1944, h. 4, էջ 12), բայց այն իմաստը չի ունեցել, ինչ իմաստով որ այժմ գործածվում է խոսակցական լեզվում: Բառը մի փոքր իմաստափոխվել է՝ ընկալվով որպես **ընկուզեղեն կամ կաղնեղեն՝** նուշ, կաղին, պիստակ եւն:

Չարազեղեն-ի կամ **դեսերտ**-ի հայերեն համարժեքը աղանդեր-ն է: Բայց **աղանդեր**-ն ավելին է, քան **ընկուզեղեն**-ը կամ **կաղնեղեն**-ը: Եվ նպատակահարմար է՝ խոսակցական լեզվում գործածվող չարազեղեն-ի փոխարեն կիրարկել **կաղնեղեն**-ը կամ **ընկուզեղեն**-ը:

Ի դեպ, **կաղնեղեն**-ը (լատ.՝ roboreus) նոր բառ չէ, այն գրանցված է ֆրանսիացի հայագետ Յակոբ Վիլլոտի հեղինակած *«Բառգիրք հայկական լեզուի բառարանում»*: Լատ. վերնագիրը՝ «Dictionarium novum Latino-armenium...» (*«Նոր բառգիրք լատինա-հայկական...»*, Հռոմ, 1714, էջ 364):

Մարիամ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Վաղ ամուսնությունների վնասակար հետեւանքների շուրջ

սկիզբը՝ էջ 5

Նրա դիտարկմամբ՝ վաղ ամուսնությունների կանխարգելման հարցում առողջ ապրելակերպից բացի՝ նշանակալի ազդեցություն կունենա նաեւ պարտադիր կրթությունից դուրս մնացած երեխաների հայտնաբերման շուրջ տարվող գործընթացը:

Արաքսիա Սվաջյանը տեղեկացրել է՝ նախորդ տարեվերջին լրամշակվել է պարտադիր կրթությունից դուրս մնացած երեխաների բացահայտման եւ ուղղորդման կարգը, որը գործում է դեռ 2021 թվականից:

«Հստակ առանձնացվել են ընթացակարգերը, եւ դրան համապատասխան՝ յուրաքանչյուր մարմին եւ գերատեսչություն գիտի իր անելիքները. տեղեկատվական համակարգն ամբողջությամբ ավտոմատացված է, ինչը հնարավորություն կտա ինչպես դուրս բերել պարտադիր կրթությունից դուրս մնացած, այնպես էլ դուրս մնալու ռիսկի տակ գտնվող երեխաներին. 6 աշխատանքային օր անընդմեջ բացակայող երեխաները համարվում են ռիսկի տակ գտնվող, ու եթե բացակայության համար չկա հիմնավոր պատճառ, երեխաներին դպրոց հետ բերելու ուղղությամբ պետք է լրացուցիչ աշխատանք կատարվի: Մեր երկրում 12-ամյա կրթությունը պարտադիր է. հետեւաբար յուրաքանչյուր ծնող պարտավոր է իրացնել իր երեխայի իրավունքը: Ինչ վերաբերում է տարիքային շեմի փոփոխությանը, ապա կարծում եմ՝ մենք ավելի շատ սովորողների իրավագիտակցությանը միտված կարողությունները պետք է զարգացնենք»,- ընդգծել է նախարարի տեղակալը:

Պատասխանելով ԱԺ պատգամավորների հարցերին՝ Արաքսիա Սվաջյանը, մասնավորապես, նշել է՝ գործող իրավակարգավորումներով սահմանվել է՝ երեխան որ տարիքում հաճախի դպրոց, այդ դասարանում էլ սովորելու է.

«7 տարեկանում առաջին անգամ դպրոց հաճախող երեխան հայտնվելու է երկրորդ դասարանում: Իր հետ ստիպված անհատական աշխատանք պետք է անել, որպեսզի առաջին դասարանի ծրագիրը յուրացնի, իսկ դա ավելի է բարդացնում երեխայի վիճակը: Կարծում ենք՝ սա զսպող մեխանիզմ կհանդիսանա, եւ ծնողները երեխաներին դպրոց կտանեն 6 տարեկանից, ինչպես սահմանված է «Հանրակրթության մասին» օրենքում»,- նշել է նախարարի տեղակալը:

Նշենք՝ խորհրդարանական լսումներին ներկա են եղել նաեւ իրավասու մարմինների, ազգային փոքրամասնությունների, այդ թվում՝ եզդիական համայնքի ներկայացուցիչներ: ԱԺ պատգամավոր Ռուստամ Բաքոյանի խոսքով՝ ամուսնության տարիքային շեմի բարձրացման նպատակով իրականացվող օրենսդրական բարեփոխումները նախատեսվում են 2024 թվականին:

«Խորհրդարանում հանդիսանալով եզդիական համայնքի ներկայացուցիչ՝ ստանում եմ բազմաթիվ ահազանգեր՝ հատկապես եզդիական համայնքի շրջանում վաղ ամուսնությունների մասով, սակայն պետք է արձանագրել, որ խնդիրը համատարած բնույթ է կրում: Կարեւորում եմ վաղ տարիքից երեխայի գիտակցությանը հասցնել այն գաղափարը, որ վաղ ամուսնությունները կարող են ունենալ բացասական հետեւանքներ իրենց հետագա կյանքի, նաեւ ճակատագրի վրա: Անչափահասների ամուսնությունն առաջացնում է տարաբնույթ խնդիրներ առողջական, կրթական, սոցիալական տեսանկյունից»,- ասել է Բաքոյանը:

Պարույր Սեւակ - 100

Հայրեներգության նոր որակ

սկիզբը՝ նախորդ համարում

Կյանքը վերստին նորոգվում է, նորից գարուն, ահն ու մահը, ախն ու վախը, որ հայոց կյանքի ուղեկիցն էին ինչպես Թուրքա-Հայաստանում, այնպես եւ Ռուսա-Հայաստանում ժողովրդին սովորեցնում են ապրելու դժվարին արվեստը: Գալիս է սխրանքի պահը, գրվում է *«Հերոսական»* ողողանջը: Պոեմի քնարական բնույթն այստեղ ավելի քնարական է դառնում, Կոմիտասի կերպարի կողքին ավելի է զգացվում հեղինակային կերպարի ներկայությունը: Կոմիտաս-Հեղինակ՝ մե՛կ լրիվ ձուլվում են, մե՛կ առանձնանում: *«Հերոսական»*-ն սկսվում է այս տողերով. *«Ա՜խ, ի՛մ ժողովուրդ, // Ես դեռ չկայի՜, // Որ քեզ պես ես էլ քեզ հետ տոկայի՝ // Ծալվելու պատրաստ մեջքդդ գրկելով» (4, 87): Հեղինակային ներկայությունը դառնում է կերպարային. «Իր ժողովրդի // Երգահան որդին // Իր ե՛րգը բերեց // Քաջորդյաց մարտին, // Իր «Լո-լո»-ն՝ // Մի ջո՛կ, // Մի դասա՛կ // Մի գո՛ւնդ»:* Նկատի ունի ազատամարտի շարժումը՝ որպես ժողովրդական ընդդիմություն:

Հերթական ծանրախոհ աշնան պատկերով հնչում է *«Միջօրեի համազանգ»*-ի *«Ուխտագնացության»* ողողանջը: Ամեն ինչ շարունակականության մեջ է, որովհետեւ կա ժամանակի գործոնը, որ վերածվում է ժողովրդի պատմության: Այս ժամանակային բացվածքների մեջ էլ ներկայացվում են ծեսերն ու սովորությունները, որոնցում ժողովրդի հավաքական բնավորության հիմնական գծերն են: Կոմիտասն այս ազգագրական հանդեսի մեջ էր: Այդպիսին են *«Ուխտագնացության», «Խաղկապի», «Ջմեռնամուտի», «Հարսանեկան»* ողողանջները, որոնցից յուրաքանչյուրը ժողովրդական կենցաղի մի պատկերազարդ հանրագիտարան է: Ահա հասանեկանը.

Ա՜խ, Վարդապե՛տ,
Այսպես սրանք
Երգ ու տաղով,
Պար ու խաղով,
Պիտի հասնեն խնամոնց տուն,
Պիտի այնտեղ ուրախ կոնծեն,
Պիտի ուզեն հարսի խոնչեն,
Պիտի պաչեն պառավներին
Ու հագուրդ տան ծարավներին
Վառ օղիով, գինի՝ ավել:
Ա՜խ, Վարդապետ, այնտեղ նրանք,
Ըստ ընդունված սովորույթի՝
Դեռ կսարքեն անմեղ դավեր.
Կգողանան թմբլիկ հավեր,
Աքաղաղներ զառ ու գիրուկ,
Կթռցնեն ճաշի պնակ,
Կքաշքշեն իրար ականջ, բեղ ու մորուք՝
Իբրեւ զվարթ ուրախության
անմեղ հանաք,-
Ու դեռ կերգե՛ն, կերգե՛ն, կերգե՛ն,
Կայրեն հոգի, սիրտ կըմրկեն...
Էհ, Վարդապե՛տ, ո՞վ չգիտի,
Էլ ո՞ւր մնաց դո՛ւ չիմանաս,
Որ հարսնահոր տնից պիտի
Դուրս գան սրանք ուրախ-խնդուն,
Ճամփա ընկնեն դեպի ժամտուն
(4, 113-114):

Ամեն մի տող մեկական գործողություն է, որ արձանագրվում է, նկարագրվում ու պատկերվում: Կենցաղի, կենցաղավարության ներկայացում է նաեւ *«Մրմուռի»* ողողանջը, ուր սիրո փակ աշխարհն է: Այդ աշխարհը եւս բացվում է ժողովրդական երգով. *«Իմա՜լ էնեմ, իմա՜լ էնեմ, // Յար պատիկ ա, շիվարե՜լ եմ», «Էս անտեր բարձի վրա // Առանց յար քո՜ւն չի գալիս», «Ա՜խ, երթար ու էլ ե՛տ չգար // Քեզի սոլդաթ գրած տարին»:* Կոմիտասի կերպարի աստիճանական ձեւավորումն այս ամենի մեջ է. *«Թե մինչեւ հիմա որտեղ որ երգն էր՝ // Այնտեղ էլ նա էր, // Այսուհետ արդեն որտեղ որ նա էր՝ // Այնտեղ էր երգը»: Սկսվում է Կոմիտասի հրաշագործման շրջանը: Արտերում*



ու կալերում, հարսանիքներին ու ծնունդներին հնչող երգերը նրա մշակմամբ հնչում են դահլիճներում. «Եվ այն, ինչ հայ գյուղացին ձիգ էր տվել դարերով // Ապարանի կամ Լոռվա հերկում, կալում, խոզանում, // Հիմա արդեն, Վարդապե՛տ, // Ծավալվում էր քո շրթից, // Ծավալվում էր Լոզանում» (4, 138): *«Միջակության»* ողողանջում հեղինակի ներկայությունը վերստին ձուլվում է հերոսին: Եվրոպայի բեմերում հաղթանակած Վարդապետը վերադարձավ էջմիածին եւ դեմ առավ միաբանների չարությանն ու նախանձին: Այդպես Սեւակը Մոսկվայից *«Անլռելի...»*-ով վերադարձավ Երեւան եւ դեմ առավ միջակության պատնեշին: Կերպավորվում է միջակությունը, որ բոլոր ստեղծագործողների չարիքն է, որովհետեւ *«Կարկին-քանոնով, // Կարգ ու կանոնով // Արտակարգի դեմ գրոհ է տալիս // Նույն ինքը... // Նորին միջակությունը»:* Նա ունի աչքեր, ականջներ, դիրք, պաշտոն, նա ամեն ինչ ունի, բացի հանճարից: Կոմիտասին մեղադրեցին աշխարհիկ վարքի մեջ, քանի որ ոչ թե հոգեւոր, այլ աշխարհիկ երգն էր հանել բեմ, իսկ Սեւակին չներեցին գեղարվեստական նոր մտածողությունը: Մինչդեռ Վարդապետը չուներ անգամ անձնական կյանք. այն, ինչ վանքինն էր՝ մնաց վանքի պատերի ներսում, այն, ինչ հանճարինն էր՝ դարձավ երգ:

Կոմիտասը Պոլսում՝ առիթ է կերպավորելու այդ քաղաքը հայի աչքերով, հիշելու Ադանայի ջարդերը: Միտքը խորանում է դեպի պատմություն՝ այս անգամ *«Նվաճելով սիրտն Ասիայի»:* Մարմին է առնում *«Անուշ»* օպերան, ստեղծվում է «ուսան» երգչախումբը: Նա նորից էջմիածնում է, երեւում է ճեմարանի պահակ Նախո քեռու կերպարը, ով հայոց դյուցազներգության ասացողներից էր: Հիմա էլ առանձին խմբերգեր են հնչում *«Վարդան»* օպերայից: Հաջորդում են նոր հրավերներ Բեռլին, Փարիզ: Կոմիտասը հիմա ականավոր երաժիշտների, միջազգային հանձնաժողովների առջեւ պիտի հաստատեր իր արվեստի ուժը: Նա եւ՛ մեկնաբանում է հայոց երգը, եւ՛ ինքն էլ կատարում, այն դեպքում, երբ ուրիշները *«Ձեկուցման հետ բեմ են հանում // Նվագախո՛ւմբ, պարե՛կ, երգի՛չ»:* Հաջողություններն ուղեկցում են, ծրագրերն իրականանում... Հենց այդ պահին լսվում է հայոց ողեռնի անդունդածայն ճիչը: Հիմա արդեն պատմությունն է դառնում գլխավոր հերոս, որ *«Եղեռնի համազանգ»*-ում հնչում է սրտակեղեք ողողանջներով՝ *«Ընդհատված», «Տագնապալի», «Նախճիրի», «Եղեռնական», «Աքսորի», «Մթագնումի», «Ցնորման», «Անանց սուգի»:* Մի ամբողջ ժողովուրդ բնաջնջվեց իր հայրենիքում: Այս ողբերգությունն առաջին իսկ պահից արյան կարմիր տողերով պատկերել են հայ գրողները, պատմագիրները, ականատեսները, լուսանկարիչները: Այս ողբերգությունը բաժին է հասել ամեն մի ընտանիքի եւ սերունդներ սնել եղեռնական սարսափների հիշողություններով: Պոեմն այստեղ վերածվում է մի մեծ սգերգի, այլ բառով՝ ռեքվիեմի. ամենուր մեռելոցի աղեկտուր ձայներ են: Կյանքը կանգ է առնում, ամեն ինչ քարանում է արյան մեջ: Սրի է քաշվում մի ամբողջ տոհմիկ ժողովուրդ, գետնահարվում է հազարամյակների մշակույթը եւ այս ամենը պատկերված է հայ ու միջազգային կյանքի համապատկերով: *«Եղեռնական»* ողողանջը մեռելոցի մի բազմաձայն համանվագ է, որտեղ դարձյալ ժողովրդական երգն է՝ բառ առ բառ, հնչյան առ հնչյուն, որպես ցավի կրակված մի սյուն, մի սեւ պտտահողմ՝ տարածված ամբողջ հայոց աշխարհի վրա.

արուն ա, ձուն ա արել,
Արունը ջուր ա դառել,
Բնավեր հավք ենք դառել,
Ջուլում էր, զուլո՜ւմ, լա՛ռ...
Տնավե՜ր-բնավե՜ր լաճ...
Սեւ՜ հագիր, սեւսիրտ մարե...
Աշխարհում ով մոռանա,
Ջուխտ աչքով թող քոռանա...
Սարերը հով չեն անում,
Իմ դարդին դարման անում,
Սարվորին հաց եմ բերում,
Բերանը բաց եմ բերում,
Իմ ծամթել տամ լողվորչուն... (4, 190):

Շատ տողեր կրկնվում են մի քանի անգամ: Հաջորդ պատկերները, եթե ընդհանրության մեջ դիտվեն եղեռնապատումի այլ դրվագների հետ, ընդհանուր կարող է լինել սոսկ մեկ բառ՝ դժոխք. խորապես անհատական պատկերաշար, որ ոչ ազդեցություն կարող է կրել, ոչ էլ ազդել, որովհետեւ կդառնա նմանակում: Հայոց վերածնվող հանճարը խեղդվեց արյան մեջ. աքսոր, խոշտանգում: Եվ նորից երգի մոտիվներ. այս անգամ՝ *«Չինար ես՝ կեռանալ մի...»:* Երգի բառերը լուծվում են տողերի մեջ որպես մի նոր սգերգ ու մեռելոց, մի ողբասացություն, որ անգամ նորություն է ողբերով հարուստ հայ գրականության մեջ: Ժողովրդականին ավելանում է նաեւ հոգեւորը. *«Յաղագըս հարց, եղբարց մերոց, // Որք են տարեալ ի գերութիւն, // Տէ՛ր, ողորմեա... // Շիջո՛ զհուր վառ հնոցի, // Փրկեա՜ զմեզ ամենագո՛ւթ...// Հայցեմք ի քեզ արտասուելով // Եւ պաղատիմք զայս ասելով. // -Տէ՛ր, ողորմեա...»* (4, 195):

